

միմեանս՝ ասէին, եթէ դոքա զփառաւորն բերցեն, մերումս յաղթէ փառաւորութեան. վասն որոյ ետուն պա-
տասխանի թէ զմիջակն բերէք կարմրակազմ»:

Հուսկ վերոյիշեալ Հայրերը ամէն ինչ ի Ս. Ղազար պատրաստելէ վերջ՝ Վենետիկ կը վերա-
դառնան հանդիսին նախընթաց իրկունը, մարքէզ Յովհաննէս աղա Սեղբոսեանի տունը գիշերելու
համար, որպէս զի չարգիլուին օգոյ որեւէ անակնկալ փոփոխումէ:

Հանդիսին օրը, որ տօն է լատինաց Ս. Բենեդիկտոս աբբայի, ամբողջ քաղաքը՝ իբրեւ կի-
րակի տօն կը պահէ: Վանական կարգադրութեան մը համաձայն՝ նոյն առաւօտ Ս. Ղազարէն կը
մեկնին նաւակով Ս. Գէորգ ինն հոգի, որ են. Հ. Յովսէփ, Հ. Յովհաննէս, Հ. Ղուկաս, Հ. Ան-
տոն, Հ. Մատթէոս, Հ. Յակոբ, Հ. Մանուէլ, Հ. Թադէոս և Եղ. Անտոն, իբրեւ «քանդօք աշխիւքն
երգիւք օգնականք սարկաւազաց ի դպրոսքիւն»։ ամսիջապէս եկեղեցի կը մտնեն, ուր ոչ մէկը
առանց տոմսակի կրնար մտնել:

Կ'ըսէ Հ. Աւգերեան.

«Այլք ոչ սակաւք ի Ֆռանկաց պէսպէս հնարիւք մտեալ են, է՛ որ զօթաշաղիկ զիրեամբ արկեալ որպէս
պաշտօնեայ, է՛ որ կապոց ինչ արկեալ զանթով, կամ մեկնոց զթեւով՝ որպէս պաշտօնեայ միոյն ի կարգինալաց
կամ յեպիսկոպոսաց. են.»:

Հ. Ստեփան և Հ. Մկրտիչ առտու կանուխ մարքէզին տունէն Ս. Գէորգ կը մեկնին և բարե-
բախտ կը գտնուին պատարագին մատուցանելու՝ վանահօրմէ վերջ՝ մենաստանին վերնայարկը
գտնուող Ս. Բենեդիկտոսի խորանին վրայ, ճիշդ իր տօնին, վասն զի անկարելի կ'ըլլայ եկեղեցւոյն
մէջ, պատարագիչներու բազմութեան պատճառաւ:

Եկեղեցի իջնելէ յետոյ կը հրաւիրուին Պապին արարողապետէն՝ զգեստաւորուելու և պատրաստ
գտնուելու համար, զոր այսպէս կը նկարագրէ Հ. Աւգերեան:

«Վ. Հ. Ստեփանն զգեցաւ զշաղիկ ի դիպակէ, և արկաւ զլանջօք և զթիկամբք զուրար սրբոյն Ստեփան-
նոսի խաչածե փաթութեալ, և բազպան տիպայ յերկոսին դաստակս (ըստ ժամարարի): Եւ Հ. Մկրտիչն զգեցեալ
նոյնպէս տիպայ շաղիկ, եդ ի դաստակս՝ բազպանս ոսկեծաղիկս ի նիւթոյ Ֆռանայոյ կոչեցելոյ, և ի վերայ
ձախոյ բազպանին փաթութեաց զուրար ի նոյն նիւթոյ առկախեալ: Եւ առեալ ի ձեռս զգիրս իւրեանց զլանջօք
(որոց մին էր փոխան Աւետարանի՝ քաղուած Աստուածաշնչի, և միւսն փոխանակ զորոց ընթերցուածոյ խորհր-
դատեալ, միօրինակ կարմրակազմ ոսկեջուր, ունեւով զկարգալի բանս յունարէնս մածուցեալ ի մէջն ձեռագրով
իւրեանց»:

Ժամ 10ին փառաշուք թափորը կը սկսի շարժիլ և իջնել մենաստանէն դէպի հոյակապ եկե-
ղեցին: Երբանազգեաց կարգինալներէն վերջ ընդհանուր խանդավառութեանց մէջ տաճար կը մտնէ
նորընտիր Քահանայապետը Պիոս Է. զահաւորակի վրայ բազմած, մինչ Վենետկոյ երկինքը կը
լեցուի բոլոր զանգակներու հանդիսաւոր զօղանջներով և թնդանթներու զոռումով:

Այն ինչ մէն մի պաշտօնեայ իր տեղը կը գրաւէ՝ կը զգեստաւորուին Երիւնաւորք. Քահանա-
յապետին զահուն քով կը գրաւեն սարկաւազ ծիրանաւորն ու կիսասարկաւազ մոնսիրնեօր մը. և
միւս ամէն պաշտօն ունեցող անձնաւորութիւնք՝ արարողական զգեստներով: Այսպէս ամէն ինչ
պատրաստուելէ վերջ՝ արարողապետը կ'առաջնորդէ զՀ. Ստեփանն ու զՀ. Մկրտիչը ու կը դասէ
պապին պաշտօնեաներուն կարգին մէջ՝ Պիոս Է. ի հանդէպ լատին կիսասարկաւազին երկու կող-
մերը: Իրենց ետեւ բարձրաստիճան եկեղեցականներու կարգին վրայ կը գտնուի նաև Պրանքա-
տորոն՝ որ կ'ըսէ «դաշն ձայնիւ և ժպտելով ցՀ. Ստեփանն. Եւ եղէ պատճառ մտից ձերոց յայս
հանդէս»:

Աւգերեան սեղմ ու մանրամասն կը սկսի տեղեկագրել մի առ մի ձայնաւորին ընթացքը՝ արա-
րողական շարժումներով և կը հասնի մինչև ընթերցուած, զոր նախ լատին կիսասարկաւազը կը
կարդայ: Անկէ վերջը Հ. Մկրտիչն է որ՝ հետեւելով արարողապետին՝ կը մօտենայ Ս. Պապին և
յետ օրհնութիւնն առնելու կը դառնայ իւր տեղը. նախ ձայն մը կը լսուի. Հ. Ստեփանն է, ինչպէս
կ'ըսէ Ժամանակագրութիւնը. «Ի ձայնէ Հ. Ստեփանի՝ Փոօսթօմէն սկսաւ և Հ. Մկրտիչն ըն-
թեմուչ. Գաթօլիքիս ևև, զկարողիկեայց բողոքն Ա. Պետր. Ա 1-7. եղանակելով ըստ կերպի